ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

9 մայիսի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

65
(2731)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ ՍԿԱՆԴԱԼԱՅԻՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

TM AUDIT

22, գ.Երևան 0014, Գ.Մնացականյան 8, 2հ/հ , (374 60) 60 70 80, info@tmaudit.am, www. tmaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) կից ներկայացված հատուկ նպատակի հիմունքի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունները (այսուհետ՝ տարեկան ֆինանսական հաշվետվություններ), որոնք ներառում են 2021 թվականի տարեկան ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի ու գույքի վերաբերյալ հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ այս եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցերի ազդեցության, տարեկան ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով պատրաստված են «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ **Օրենք**) և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022թ. հուլիսի 22-ի N 04-Ն որոշման (այսուհետ՝ **Որոշում**) ֆինանսական հաշվետվողականությանը վերաբերող պահանջներին համապատասխան:

Վերապահումով կարծիքի հիմք

1. Կուսակցությունը կատարել է 9,064 հազար դրամի կանխիկ դրամական վճարումներ:

Չի պահպանվել Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջը, որի համաձայն՝ Կուսակցությունը բոլոր դրամական վճարումները պետք է կատարի անկանխիկ:

2. Կուսակցությունը իրավաբանական անձանցից ստացել է 16,300 հազար դրամի ընդհանուր գումարով դրամական աջակցություններ: Կուսակցությունը թվով երկու իրավաբանական անձանցից անհատույց օգտագործման իրավունքով ստացել է տարածքներ (բնեղենով նվիրատվություններ):

Օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ նվիրատվություններ չեն թույլատրվում ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից:

3. Տարեկան ֆինանսական հաշվետվություններում (Ծանոթագրություն 2) թվով 3 անշարժ գույքերի համար չեն լրացվել «25 Անշարժ գույքը շուկայական արժեքից էականորեն ցածր գնով Կուսակցությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու արդյունքում հաշվարկված մուտքեր» աղյուսակով սահմանված ամբողջական տեղեկատվությունները:

Որոշման համաձայն (Հավելված N 2, կետ 6)՝ տարեկան հաշվետվությունը համարվում է թերի եթե այն դեպքերում, եթե պարտադիր լրացման ենթակա դաշտի առկայության դեպքում այն չի պարունակում պահանջվող տեղեկությունը:

4. Օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ հոդվածի՝ նվիրատվություն կատարող անձինք պարտավոր են նշել իրենց անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի համարը և Տարեկան ֆինանսական հաշվետվությունների «Դրամական նվիրատվություններ» ծանոթագրություն 1-ում (1.1 Ֆիզիկական անձանց դրամական նվիրատվություններ) պետք է ներկայացվեն նվիրատուների անունը հաստատող փաստաթղթի համարը:

Չի պահպանվել Օրենքի և Որոշման պահանջները և տարեկան ֆինանսական հաշվետվություններում Կուսակցությունը 465,306 հազար դրամի նվիրատվություն տրամադրած թվով 525 նվիրատուների մասով ամբողջապես չի լրացրել անձը հաստատող փաստաթղթերի համարները:

5. Չի պահպանվել Օրենքի և Որոշման պահանջները և տարեկան ֆինանսական հաշվետվությունների «Այլ մուտքեր» տողում լրացված 9,272 հազար դրամ գումարի, որոնց գծով բանկային հաշվի քաղվածքներում նշված է «այլ ֆիզիկական անձանցից» և 3,124 հազար դրամ POS տերմինալով ստացված գումարի. գործառնությունները չունեն հստակ նկարագրություններ և պարզ չեն, թե ինչ նպատակով են ստացվել:

6. Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մեկ ֆիզիկական անձի կողմից Կուսակցությանը տրվող նվիրատվության սահմանաչափը տարեկան 2,500 հազար դրամ է, իսկ 23-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ մեկ ֆիզիկական անձի կողմից անդամավճարի առավելագույն չափը տարեկան 1,000 հազար դրամ է:

Կուսակցությունը թվով 1 անձից ստացել է 4,992 հազար դրամի նվիրատվություն, և թվով 4 անձանցից ստացել է 9,000 հազար դրամի անդամավճարներ, որոնք գերազանցում են Օրենքով սահմանված սահմանաչափերը:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (այսուհետ՝ ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կուսակցությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի (այսուհետ՝ ՀԷԷՍ) կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷԷՍ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարարության ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում. Ֆինանսական հաշվետվողականության հիմունքը

Մենք ուշադրություն ենք հրավիրում տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից «Հատուկ նպատակի հիմունքը» ծանոթագրությունը, որտեղ նկարագրվում է ֆինանսական հաշվետվողականության հիմունքը: Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պատրաստ-

2 3

Կուսակցությունների, լրատվամիջոցների ֆինանսական թափանցիկության մասին խոսող, պահանջներ ներկայացնող իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հերթական սկանդալի մեջ է ընկել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ անկախ աուդիտորական եզրակացություն է ուղարկվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ հայտնաբերելով աղաղակող ֆինանսական խախտումներ: Իշխող կուսակցությունը թուլատրելի չափից շատ անդամավճար է հավաքել, շուկայականից ցածր գնով կուսակցական գրասենյակներ վարձակալել եւ նվեր ստացել գրասենյակի տարածքներ, որոնք պարզ չէ՝ ով է տվել, ինչ ծառայության դիմաց եւ ինչ իրական նպատակներով: Կոռուպցիան մերժող Նիկոլ Փաշինյանի ղեկավարած ՔՊ-ի վերաբերյալ «ԹՄ աուդիտ» ՓԲԸ-ն եզրակացություն է ներկայացրել՝ համաձայն որի՝ կուսակցությունը կատարել է 9 մլն 64 հազար դրամի կանխիկ դրամական վճարումներ: Եվ այստեղ էլ հենց կանոններ են խախտվել, քանի որ, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի համաձայն, կուսակցությունները բոլոր դրամական միջոցները պետք է կատարեն անկանխիկ եղանակով: Բացի այդ, ՔՊ-ն իրավաբանական անձանցից ստացել է 16 մլն 300 հազար դրամի աջակցություն, բայց պարզ չէ՝ ովքեր են խորհրդավոր նվիրատուները: Իշխող կուսակցությունը երկու իրավաբանական անձանցից նաեւ բնեղեն նվիրատվություններ է ստացել՝ տարածքի տեսքով, բայց էլի պարզ չէ, թե ովքեր են իշխող ՔՊ-ին նվերներ տվել: Բացահայտվել է նաեւ, որ 525 նվիրատուների մասով որեւէ տեղեկություն առկա չէ, չկա տվյալ՝ ով, ինչու է նվեր տվել իշխող թիմին: Սա էլ դեռ ամենը չէ. կուսակցությունը մեկ անձից ստացել է 4 մլն 992 հազար դրամի նվիրատվություն այն դեպքում, երբ տարեկան մեկ անձի կողմից 2 մլն 500 հազար դրամ պետք է կազմի այն, այսինքն՝ ՔՊ-ն ստացել է նաեւ թուլատրելիից ավելի նվիրատվություն՝ գումարի տեսքով:

Նկատենք, որ ՔՊ-ի վարչության կեղծված ընտրություններից հետո այս բացահայտումները երկրորդ խոշոր սկանդալն է իշխող ՔՊ-ի շուրջ: Կոռուպցիայի դեմ պայքարելու համար իշխանության եկած Նիկոլ Փաշինյանն ու իր թիմը թաղվել են կոռուպցիայի մեջ:

ՔՊ խմբակցությունը զբաղված է ԱԺ միակ ընդդիմադիր պաշտոնյայի՝ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության հարցերի հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանին պաշտոնանկ անելու հարցով:



Հայաստանի Հանրապետության լինելիության հարցն է քննարկում Նիկոլ Փաշինյանը Վաշինգտոնում, Մոսկվայում եւ, գուցե, նաեւ Բրյուսելում, սակայն իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը շարունակում է մնալ պասիվ դիտորդ: ԱԺ իշխանական 71 պատգամավորների գերակշիռ մեծամասնությունը, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, խորը անտեղյակության մեջ է: 1-2 հոգի են որոշակի տեղեկության տիրապետում, թե Նիկոլ Փաշինյանն ինչեր է քննարկում Հայաստանի Հանրապետության մասին: Արցախի Հանրապետության հարցը վաղուց փակված է ՔՊ-ականների համար: ՔՊ-ում հույս ունեն, որ Փաշինյանը Մոսկվայից վերադառնալուց հետո կիանդիպի իրենց եւ կլուսավորի՝ ինչ է կատարվում: Բանն այն է, որ ՔՊ-ում վաշինգտոնյան բանակցություններից հետո դեռ չեն էլ հասցրել հանդիպել Փաշինյանի հետ, չեն քննարկել արդյունքները, տեղյակ չեն՝ մի քանի օր շարունակ ինչ են բանակցել ԱՄՆ-ում Միրզոյանը եւ Բայրամովը, միայն ԱԺ հարցուպատասխանի ժամանակ են որոշ կցկտուր բաներ լսել Փաշինյանի կողմից: Արեւմտյան մամուլը գրում է, որ մայիսի 14-ին նոր բանակցություն է սպասվում արդեն Փաշինյանի ու Ալիեւի մասնակցությամբ, այս անգամ էլ՝ Բրյուսելում: Հիմա ՔՊ-ում շունչները պահած սպասում են Փաշինյանին, որը մայիսի 9-ին անցկացվելիք՝ Հայրենական մեծ պատերազմում հաղթանակին նվիրված միջոցառումներին մասնակցելու համար մեկնել է Մոսկվա: Փաշինյանի վերադարձից հետո՝ մինչ նրա՝ Բրյուսել մեկնելը, ՔՊ-ականները կհավաքվեն, որպեսզի Փաշինյանից տեղեկանան վաշինգտոնյան բանակցությունների մասին եւ հասկանան՝ ինչ օրակարգով է նա մեկնում Բրյուսել՝ Ալիեւի հետ հանդիպման: Մի բան հստակ է. ՔՊ-ականները վախեցած են եւ միայն թաքուն հույս են փայփայում, որ Փաշինյանը հերթական անգամ նոր փաստաթուղթ չի ստորագրի ինքնագլուխ, որի տակից հետո ամբողջ խմբակցությունով չեն կարողանա դուրս գալ:



Հայ ժողովուրդը մայիսի 9-ին տոնում է եռատոնը՝ Հայրենական մեծ պատերազմում հաղթանակը, Շուշիի ազատագրման եւ Արցախի պաշտպանության բանակի ստեղծման տարեդարձը: Ավանդաբար Հայաստանում ու Արցախում մայիսի 9-ին մի շարք միջոցառումներ են տեղի ունենում՝ պաշտոնական մակարդակով: Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ Նիկոլ Փաշինյանը մեկնել է Մոսկվա եւ այնտեղ է մասնակցելու միջոցառումների, հետեւաբար նա «Հաղթանակ» զբոսայգում ներկա չի լինի: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս անգամ պաշտոնական միջոցառումը կազմակերպել է ՀՀ նախագահի աշխատակազմը, ներկա են լինելու պաշտոնյաներ, հյուրեր:

Ազգային ժողովի աշխատակազմը մեկ ամսից ավելի է՝ ծառայողական քննություն է իրականացնում՝ պարզելու համար, թե ինչպես է Ազգային ժողովի պատգամավորներ Վլադիմիր Վարդանյանի եւ Միեր Սահակյանի մասնակցությամբ միջադեպից հետո տեսանյութը հայտնվել իշխանական պատգամավորների հետ առնչություն ունեցող լրատվամիջոցներում: Ո՞ւմ հրահանգով եւ ո՞ւմ կազմակերպմամբ է դա տեղի ունեցել: Ինչպես հայտնի է, մարտի 31-ին ԱԺ պետահրավական հանձնաժողովում փակ քննարկման ժամանակ ծեծկռտուք էր տեղի ունեցել: Ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միեր Սահակյանը հարվածել էր ՔՊ խմբակցության պատգամավոր Վլադիմիր Վարդանյանին: ԱԺ տեղեկատվության ազատության պատասխանատու Լաուրա Անտոնյանը «Ժողովուրդ» օրաթերթին հայտնել էր, թե ապրիլի 3-ից ծառայողական քննություն է սկսվել: Եվ, ահա, «Ժողովուրդ» օրաթերթը մեկնաբանության համար կրկին դիմեց Լաուրա Անտոնյանին, որն ի պատասխան հայտնեց. «Միջադեպի հանգամանքները լիարժեք եւ ամբողջական պարզաբանելու նպատակով վարույթը դեռ ընթացքի մեջ է»: Ամեն դեպքում, նկատենք՝ այդքան երկար ծառայողական քննություն իրականացնելու պատճառ թերեւս չկա. պետք է ընդամենը հասկանալ՝ ով է մտել անվտանգության տեսախցիկների սենյակ, կամ ով է հրահանգել կրիչով դուրս հանել օրվա տեսաձայնագրությունը: Սա անելու համար մեկ ամիս ժամանակ վստահաբար պետք չէ:

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԵԹԵԹ ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԴՐՎԵԼ

Արաբկիրի նախկին թաղամեծ, այժմ «Հանրային ձայն» կուսակցության համախոհ Հովհաննես Շահինյանին ձերբակալելու որոշում է կայացվել: Ինչպես Հովհաննես Շահինյանն էր «Ֆեյսբուք»-ում հայտնել, Ոստիկանության Երեւան քաղաքի գլխավոր վարչության մի խումբ աշխատակիցներ այցելել են իր ծնողների բնակարան, որպեսզի, ինչի որոշման համաձայն, ձերբակալեն Շահինյանին, թեեւ վերջինս, արդեն տեւական ժամանակ է, բացակայում է երկրից:

«Ոստիկանության Երեւան քաղաքի գլխավոր վարչության մի խումբ աշխատակիցներ այցելել են ծնողներիս բնակարան՝ պատճառաբանելով, որ, իբրեւ թե, ցանկանում են ինձ հետ զրուցել, բայց ինչպես ընդունված է մեր օրերում, այդքան մեծ կազմով բնակարան այցելում են միայն ձերբակալման նպատակով: Քանի որ մեր իրավապահները հետեւում են իմ էջին, ուստի ցանկանում եմ նշել, որ այս պահին գտնվում եմ ՌԴ Մոսկվա քաղաքում, եւ վերադառնալուն պես անպայման կայցելեմ իրենց»,- ապրիլի 19-ին գրել էր նա:

ArmLur.am-ը այս առիթով զրուցել է նրա պաշտպան Արսեն Բաբայանի հետ:

-Պարոն Բաբայան, ինչո՞ւ է Շահինյանին ձերբակալելու որոշում կայացվել, ո՞րն է կոնկրետ առաջադրված մեղադրանքը:

-Հովհաննես Շահինյանին ձերբակալելու որոշում է կայացվել նրան հետագայում կալանավորման տանելու նպատակով, բայց կալանքի միջնորդությունը դատարանը մերժել է: Մեղադրանքը փողերի լվացման հոդվածով է, ձերբակալության նպատակն ազատության մեջ գտնվող մեղադրյալին կալանավորման ներկայացնելն է, որը Հակակոռուպցիոն դատարանի կողմից մերժվել է, կալանավորման որոշում չի կայացվել: Նման անհեթեթ մեղադրանք է առաջադրվել:

-Ի՞նչ չարաշահումների մասին է խոսքը:

-Հաշվի առնելով նախաքննության գաղտնիքը՝ շատ չեմ կարող մանրամասնել, բայց բոլորին հայտնի գործի մասին է, որի մասին Քննչական կոմիտեն հայտարարություն էր արել, եւ քրեական հետապնդումը դադարեցվել էր:

-Պարոն Բաբայան, Հովհաննես Շահինյանը հայտարարել էր, որ իրեն ձերբակալելու որոշումը կապված է իր՝ Սերժ Սարգսյանի մասին հայտարարությունների հետ, ակնարկել էր, որ Սերժ Սարգսյանն է իր նկատմամբ իրականացվող հետապնդումների պատճառը: Որպես նրա պաշտպան՝ ի՞նչ կասեք այս հայտարարության մասին:

-Իր քաղաքական նախասիրությունների եւ մտքերի մասին մեկնաբանություն չեմ անում. ես նրա փաստաբանական պաշտպանությունն եմ ստանձնել: Նրա ասածը կապ չունի պաշտպանության հետ, քրեական նյութերում չկա տվյալ, որ երրորդ նախագահի մասին իր արած հայտարարության հետ է կապված գործը: Այդ հայտարարությունը իր քաղաքական նախասիրություններին վերաբերող հայտարարություն է, որը փաստաբանության, իրավաբանության հետ կապ չունի: Այն, որ իր նկատմամբ կա քաղաքական հետապնդում, դա ակնհայտ էր նյութերին ծանոթանալու պահից: Այն, որ քննիչը անընդհատ ձգձգում էր ինձ՝ որպես պաշտպան ճանաչելը, դա էլ է խոսում քաղաքական հետապնդման մասին. քաղաքական հետապնդում իրականացնում են, ընդհանրապես, իշխանությունը եւ պետական մարմինները: Նրա հայտարարությունները՝ կապված նախկին նախագահների հետ, դրանք իր քաղաքական դիրքորոշումն է, որոնք իմ հետ քննարկելու շրջանակներից դուրս են: Այս պահին առկա նյութերում հանրապետության որեւէ նախագահի հետ կապված տվյալ չկա:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՋՆԱՎՈՒՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ԱԿՑԻԱՆ

Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը այսօր կշարունակի իր ստորագրահավաքը Շառլ Ազնավուրի հրապարակում եւ հանդես կգա նաեւ յուրօրինակ ակցիայով: Թագուհի Թովմասյանը նշում է, որ այս ձեւով իր աջակցությունն է հայտնում «ՌՀ Արցախի էթնիկ զտմանը» երիտասարդական շարժմանը:

«Մենք պահանջում ենք, որպեսզի Ադրբեջանի կողմից Բերձորի միջանցքում ապօրինի տեղադրված անցակետը հեռացվի, եւ Ադրբեջանի ցեղասպան քաղաքականությանը վերջ տրվի: Մենք պարտավոր ենք մեր միջազգային գործընկերների ուշադրությունը հրավիրել այդ հստակ իրողությունների վրա: Նպատակ ունենք ավելի շատ ստորագրություններ հավաքել, որպեսզի համայն աշխարհին ապացուցենք, որ Հայաստանը եւ Հայաստանի քաղաքացին միասնական են, եւ մենք չենք կարող երբեւէ պատկերացնել կամ ընդունել այն տեսակետը, որ Արցախը կարող է լինել Ադրբեջանի կազմում էթնիկ փոքրամասնություն: Մենք այդ անհամաձայնությունն ենք հայտնում նաեւ փաստարկված՝ թղթի վրա: Կարծում եմ, որ յուրաքանչյուր հայի առնվազն պատասխանատվությունն է, որպեսզի իր դժգոհության ձայնը բարձրացնի մեր հայրենակիցների նկատմամբ տեղի ունեցող իրավունքների խախտումների վերաբերյալ»,-նշում է Թովմասյանը:

Պատգամավորը հիշեցնում է, որ Արցախի 120 հազար քաղաքացի 4 ամսից ավելի գտնվում են պատանդի վիճակում, խախտված է նրանց ազատ տեղաշարժի իրավունքը, կենսական ամենակարեւոր իրավունքները, մատակարարումները պատշաճ տեղի չեն ունենում:

«Նույնիսկ թերսնման խնդիր կա երեխաների, ծերերի եւ հղի կանանց շրջանում, ինչը խայտառակ իրողություն է 21-րդ դարում: Մենք պետք է շարունակենք մեր բողոքի ձայնը բարձրացնել՝ի լուր աշխարհի»,- եզրափակեց Թովմասյանը: Այսօր արդեն յուրօրինակ ակցիա տեղի կունենա, եւ Շառլ Ազնավուրի հրապարակում կցուցադրվեն Շուշիից բերված գորգերը:

ՈՒՇԱԳՐԱՎ ԻՐԱՎԻՃԱԿ՝ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն դատարանում ուշագրավ իրավիճակ է ստեղծվել: Բանն այն է, որ կալանավորներն այնքան շատ են, որ նրանց դատարան ուղեկցող ոստիկանները չեն հասցնում նրանց բերել դատարան: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ բանը հասել է այնտեղ, որ անգամ Հակակոռուպցիոն դատարանի դատավորներն են դիմում ոստիկանության ուղեկցող խմբի հրամանատարին՝ խնդրելով լուծում տալ իրավիճակին, քանի որ, կալանավորներին դատարան չբերելով, նիստերն են հետաձգվում:

ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿՍՏԵՂԾՎԻ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու որոշում է կայացրել: Որոշման հիմնավորման մեջ նշվում է՝ աշխատանքային խումբը ստեղծվել է միջազգային բեռնափոխադրումների մուլտիմոդալ արագընթաց երթուղու գործարկման եւ իրանական Չաբահար նավահանգստում օպերատոր դառնալու հարցերը քննարկելու նպատակով:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ միջգերատեսչական աշխատանքային խումբը ղեկավարելու է ՀՀ էկոնոմիկայի նախարարը, որը նաեւ աշխատանքային խմբի ղեկավարն է: Այդ կազմում ընդգրկված են նաեւ վարչապետի խորհրդական, արտաքին գործերի նախարարի տեղակալներ, էկոնոմիկայի նախարարի տեղակալը եւ այլք:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ

The Financial Times պարբերականը տեղեկություններ է հայտնել առաջիկայում սպասվող հնարավոր եռակողմ հանդիպման մասին: Մասնավորապես, պարբերականի տեղեկություններով՝ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը կիրակի օրը Բրյուսելում հյուրընկալելու է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

Նշվում է, թե բրյուսելյան հանդիպումն առաջընթացի կարեւոր նշան է, քանի որ նաեւ Վաշինգտոնի քառօրյա բանակցություններից հետո Եվրամիությունն ու Միացյալ Նահանգները փոպադարձ ջանքեր են գործադրում բանակցություններ իրականացնելու համար:

Հավելենք, որ հունիսի 1-ին Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարները եւս մեկ հանդիպում կանցկացնեն արդեն Մոլդովայում Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի հետ միասին՝ գագաթաժողովի շրջանակներում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ՝ երեկ շարունակվում էին 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հարկաբյուջետային եւ ծախսային շրջանակի շուրջ քննարկումները: Վարչապետի աշխատակազմից ArmLur.am-ին հայտնում են, որ քննարկման առարկա են եղել 2024-2026թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի նախագիծը, 2024-2026թթ. ՄԺԾԾ առաջարկի հիմքում ընկած հիմնական սկզբունքները, ծրագրի ծախսային շրջանակը, ՀՀ կառավարության ծրագրի առանցքային ուղղությունները: Անդրադարձ է եղել ընդհանրական մոտեցումներ պահանջող այլ հարցերի եւս: Մտքերի փոխանակություն է ծավալվել տնտեսական ակտիվության դրական զարգացումների, ՀՀ տնտեսական աճի սցենարային կանխատեսումների, ՀՀ տնտեսական աճի եւ ՀՆԱ-ի վերանայումների, միջնաժամկետ հարկային եկամուտների եւ դրանց ռիսկերի, պարտքի բեռի կառավարելի մակարդակում պահպանման, կապիտալ ծախսերի դերի բարձրացման ու ընթացիկ՝ գնաճային ճնշումներ չառաջացնող մակարդակի պահպանմանը վերաբերող հարցերի շուրջ: Կառավարության ղեկավարն ընդգծել է նախագծերի որակի եւ արդյունավետության բարձրացման կարեւորությունը եւ հանձնարարել ամփոփել 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հարկաբյուջետային եւ ծախսային շրջանակի շուրջ հնչած դիտարկումներն ու միջգերատեսչական քննարկումները:

ԴԱՏԻ ԵՆ ՏՎԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Գլխավոր դատախազությունը դատի է տվել Աժ նախկին պատգամավոր Միհեր Սեդրակյանի որդուն՝ Դավիթ Սեդրակյանին: Ըստ հայցի՝ դատախազությունը պահանջում է 12.08.2004թ. որոշումները եւ, որպես հետեւանք, 27.08.2004թ. «Դավիթ-Արտակ» ՍՊ ընկերության անվամբ թիվ 1289995, 07.09.2004թ. Դավիթ Սեդրակյանի անվամբ թիվ 1295380, 08.10.2004թ. Վարդան Սեդրակյանի անվամբ թիվ 1193285, 10.10.2004թ. Վարդան Սեդրակյանի անվամբ թիվ 1193284 կատարված իրավունքի պետական գրանցումները եւ սեղանամատյանի գրառումներն անվավեր ճանաչել:

ԿՈՉ

ԾՆՈՂՆԵՐԸ ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄ ԵՆ ՄԿՍՈՒՄ

Հասնել կառավարության հրաժարականին եւ ձեւավորել ազգային կառավարություն.

սրանք առաջնահերթ նպատակներն են, որ նշված են «Որդիների կանչ» սոցիալ-հայրենասիրական հասարակական կազմակերպության հայտարարության մեջ: Պատերազմում զոհվածների ծնողներին միավորող կազմակերպությունն երեկ հայտարարել է ակտիվ պայքար սկսելու մասին:

Հայտարարությունն ամբողջական՝ ստորեւ.

«Հայրենիքի օրհասական վիճակով իսկապես մտահոգ քույրե՛ր եւ եղբայրնե՛ր, 2020 թվականի Արցախյան 44 -օրյա պատերազմից հետո սկիզբ առած գործընթացները, ցավոք, մեզ թույլ չեն տալիս լուռ սգալ մեր որդիների կորուստը, քանզի պետականության շարունակական գահավիժումը, քաղաքական եւ իրավական փակուղին, անպատժելիության եւ երկակի ստանդարտների մթնոլորտը շարունակում են իրենց ձախավեր ընթացքը:

Այս իրավիճակում մենք՝հայրենիքին ամենաթանկը՝ մեր որդիներին նվիրած ծնողներս, բախվելով իրավական պատնեշների, քաղաքական անելանելիության, բարոյական վարքականոնների փլուզմանը եւ պայքարելով այդ ամենի դեմ իրավական մեթոդներով, հանգել ենք այն գիտակցման, որ այս իրավիճակից կարող ենք դուրս գալ միասնական քաղաքական ու քաղաքացիական պայքարի միջոցով:

Ուստի մենք՝ «Որդիների կանչ» հասարակական կազմակերպությունը, որոշում ենք ընդունել սկսել ակտիվ պայքար՝ դիրքավորվելով որպես այդ պայքարի առաջամարտիկ (շարժիչ ուժ) եւ հետապնդելով բացառապես ոչ անձնական նպատակ՝ համախմբել Հայաստանի բոլոր կարող ուժերին, ում համար թանկ են պետականությունը եւ հայրենի հողը, որը բառիս բուն եւ փոխաբերական իմաստով ներծծված է մեր որդիների արյամբ:

Այս խորհրդանշական եւ նախկինում հաղթական օրը մենք հայտարարում ենք, որ սկսում ենք նախաձեռնողական պայքար՝ հանուն մեկ նպատակի՝ կասեցնել պետականության գահավիժումը եւ Հայաստանը դարձնել զարգացած ու անվտանգ պետություն: Համադրելով անվիճելի իրողությունները, ինչպես նաեւ մեր անձնական պայքարի դառը փորձը՝ մենք արձանագրում ենք, որ այդ նպատակին հասնելու արդյունավետ եւ իրատեսական բոլոր ծրագրերի գլխավոր նախապայմանը ներկայիս իշխանության հեռացումն է:

Ուստի մեր առաջիկա քայլերն են լինելու՝

- Հասնել կառավարության հրաժարականին,
- Ձեւավորել ազգային կառավարություն,
- Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի առկա ռեսուրսների ու իրական շահակիցների՝ մեր դարավոր բարեկամ հարեւանների ու դաշնակիցների հետ միասին կառուցել անվտանգային նոր ճարտարապետություն՝ այդպիսով ապահովելով մեր պետության շարունակական զարգացումը եւ հասարակական խաղաղ գործունեությունը,
- Կասեցնել համատարած բարոյալքումն ու արժեզրկումը, իսկ հերոսաբար նահատակված զինծառայողների ծնողների հանդեպ ամրագրել հասարակական ընդգծված հարգանքի եւ պետական երախտագիտության ինստիտուտը. սա դիտարկում ենք որպես մեր պետության եւ հասարակության գաղափարական, քաղաքացիական, բարոյական ամենակարեւոր արժեհամակարգի հիմնասյուն:

Այս քայլերին հասնելու համար մենք ավելի քան վճռական ենք՝համոզված, որ ներկայումս հենց այդ վճռականության շնորհիվ է հնարավոր հասնել բեկման ու փոփոխությունների: Մենք բարձր ենք գնահատում բոլոր ընդդիմադիր քաղաքական ուժերի, հասարակական կազմակերպությունների եւ անհատ քաղաքացիների կատարած այն ահռելի աշխատանքը, որը արվել է 2020 թվականի աղետալի պատերազմից հետո:

Միաժամանակ փաստում ենք, որ այդ պայքարին ինչ-որ բան պակասում էր, միգուցե՝ վճռականությունը: Այդ իսկ պատճառով դիմում ենք բոլոր հասարակական ու քաղաքական ուժերին միանալ մեր սկսած պայքարին: Միասին կասեցնենք պետականության անկումն ու ապահովենք Հայաստանի իրական ինքնիշխանությունն ու հաջորդական զարգացումը»:

ԼՈՒՐԵՐ

ՄԻՊ-Ը ՄԱՄՆԱԿՑԵԼ Է ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մասնակցել է քրեական եւ քրեական դատավարության օրենսգրքերի կիրառմանը նվիրված քննարկմանը:

Մանասյանը բացման խոսքով է հանդես եկել «ՀՀ քրեական եւ քրեական դատավարության օրենսգրքերի գործողության մեջ դնելու հիմնահարցերի եւ դրանց լուծման օրենսդրական եւ ինստիտուցիոնալ հեռանկարները» թեմայով քննարկմանը:

«Պաշտպանը շեշտել է, որ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից չափազանց կարեւոր է քրեական եւ քրեադատավարական պատշաճ օրենսդրություն ունենալը, եւ նշել, որ նոր օրենսդրությունն այս տեսանկյունից բավականին առաջադեմ կարգավորումներ է առաջարկում:

Պաշտպանը նաեւ ընդգծել է, որ ինչպես իրավական նորմերի կիրառումը, այնպես էլ օրենսդրության ցանկացած փոփոխություն պետք է ամբողջությամբ համապատասխանի մարդու իրավունքների թե՛ ներպետական եւ թե՛ միջազգային չափանիշներին:

Աշխատաժողովը նախաձեռնվել է ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի ու ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից: Մասնակցել են օրենսդիր եւ գործադիր մարմինների, Բարձրագույն դատական խորհրդի, իրավապահ մարմինների ներկայացուցիչներ եւ դատավորներ, որոնք ներկայացրել են իրենց գործունեության արդյունքում նոր օրենսգրքերի կիրառման առնչությամբ արձանագրված խնդիրները»,- ասված է հաղորդագրության մեջ:

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ

Ադրբեջանը հայկական կողմին կոչ է անում բարի կամք դրսեւորել եւ ավելի մեծ ջանքեր գործադրել կարգավորման բանակցությունների շրջանակներում բոլոր հարթություններում. այս մասին երեկ՝ Վիլնյուսում իր լիտվացի գործընկեր Գաբրիելյուս Լանդսբերգիսի հետ ճեպազրույցի ժամանակ, ասել է Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը (հաղորդում է Day.Az-ը):

«Ես մանրամասն տեղեկություններ եմ ներկայացրել մեր տարածաշրջանում հետկոնֆլիկտային իրավիճակի, տարածաշրջանային խաղաղության օրակարգի առաջմղմանն ուղղված Ադրբեջանի ջանքերի, այդ թվում՝ ԱՄՆ-ում Հայաստանի հետ խաղաղության համաձայնագրի նախագծի շուրջ բանակցությունների վերջին փուլի մասին»,-ասել է նա:

Նա նշել է, որ, չնայած մասնակի դինամիկային, կարգավորման բոլոր երեք հարթություններում, այն է՝ խաղաղ պայմանագրի նախագծի նախապատրաստման հարցում, որը կորոշի երկկողմ հարաբերությունների հիմքը, պետական սահմանի դելիմիտացիայի եւ տրանսպորտային ու կոմունիկացիոն կապերի վերականգնման հարցում ձեռք բերված առաջընթացը դեռեւս չի արդարացրել սպասելիքները:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Վազգեն Հարությունյանը նշանակվել է Երեւանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար: Այս մասին երեկ՝ Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցության ժամանակ, հայտարարեց Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Նշենք, որ Հարությունյանը նախկինում զբաղեցնում էր «Փարկինգսերվիս» ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնը:

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

ՄԵԿ ԱՆՁ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Սեւանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Ճամբարակ քաղաքում խուլիգանության եւ պարեկների օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու դեպքի առթիվ:



2023 թվականի մայիսի 4-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, ծառայություն իրականացնող պարեկները Ճամբարակ քաղաքի Սեպտեմբերի 21 փողոցում նկատել են, որ «Տոյոտա Ռավ-4» մակնիշի ավտոմեքենան կանգնել է հետիոտնային անցման վրա, որը զգուշացումից հետո տեղափոխվել է:

Պարեկները օրենքով սահմանված կարգով նշված ավտոմեքենան ստուգելու նպատակով կանգնեցրել են այն, վարորդից պահանջել ներկայացնել փաստաթղթերը եւ պարզել, որ վերջինս մեքենան վարում է առանց վարորդական իրավունքի վկայականի: Խոսակցությանը միջամտել է ավտոմեքենայում գտնվող ուղեւորը, որը, ինչպես պարզվել է, հանդիսանում է Ճամբարակ համայնքի ղեկավարը, իսկ վարորդը՝ Ճամբարակի համայնքապետարանի վարորդը: Խոսակցությունը վերաճել է վիճաբանության, որի ընթացքում 20-25 անձինք մոտեցել են, միջամտել վիճաբանությանը: Հավաքվածները սկսել են քաշքշել պարեկային ծառայողներին, հայհոյել, իսկ նրանցից մեկը բռունցքով հարվածել է պարեկներից մեկի դեմքի շրջանին եւ դիմել փախուստի:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է նաեւ պարեկի դեմքին հարվածած անձի ինքնությունը, որը նույն համայնքի բնակիչ է՝ ծնված 1994թ.:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Սեւանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով եւ 452-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցանքների հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Դեպքից ժամեր անց միջադեպի մասնակից նշված անձինք, պաշտոնատար անձի նկատմամբ բռնություն գործադրելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածանքով, ձերբակալվել եւ ներկայացվել են վարույթն իրականացնող մարմնին:

Նախաքննության ընթացքում կատարված ապացուցողական եւ վարութային այլ գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստերի հիման վրա՝ որոշում է կայացվել՝ համայնքի ղեկավարի եւ վարորդի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելը) հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, իսկ որպես խափանման միջոց նրանց նկատմամբ ընտրվել է չբացակայելու արգելքը: Ճամբարակի 29-ամյա բնակչի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297- րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով եւ 452-րդ հոդվածի 3-րդ մասով (պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելը՝ բռնության գործադրմամբ): Վերջինիս նկատմամբ, դատարանի որոշմամբ, որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը:

Նախաքննությունը շարունակվում է: Միջոցներ են ձեռնարկվում՝ դեպքի բոլոր հանգամանքները, միջադեպին մասնակից անձանց ինքնությունը պարզելու, նրանցից յուրաքանչյուրի գործողություններին իրավական գնահատական տալու ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ 3 ՓՈՐՁ

Վարդենիսի «Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիայի» գործադիր տնօրեն Վարդիթեր Համբարձումյանն ArmLur.am-ի հետ զրույցում ահազանգում է, որ կազմակերպության նկատմամբ հանցագործության 3 փորձ է արվել, հափշտակել են շենքի գույքային ռեսուրսները. «Վերջին դեպքը անցած տարի է եղել: Ճնշումների ազդեցության ներքո կարողացանք բացահայտել գողությունը, բայց քրեական վարույթին մինչ օրս ընթացք չի տրվել: Ահազանգս այն է, որ ոստիկանությունը եւ դատական մարմինները քնից արթնացան, որպեսզի այն կառույցը, որը հիմնադրվել է բարեգործական նպատակով, նորից ծառայի իր նպատակին»,- ասում է Մուրադյանը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ՝ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Սեւանի քննչական բաժնում քննվող քրեական վարույթի շրջանակներում իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել են Սեւան քաղաքի 85-ամյա բնակչուհու սպանության մի շարք հանգամանքներ: Վերջինիս որդին ձերբակալվել է:

2023թ. մայիսի 6-ին՝ ժամը 20:55-ին, «Սեւան» ԲԿ է զանգահարել Սեւան քաղաքի վերոնշյալ բնակչուհու որդին եւ հայտնել, որ մայրը իրենց տանը հանկարծամահ է եղել:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում կատարված դեպքի վայրի զննության ժամանակ դիակի վրա, մասնավորապես՝դեմքի ու պարանոցի շրջանում, հայտնաբերվել են կապտուկներ եւ արյունազեղումներ, վնասվածքներ են հայտնաբերվել նաեւ դիակի վերին եւ ստորին վերջույթների վրա: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ նույն օրը՝ ժամը 16:00-ի սահմաններում՝ իրենց տանը կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ, 50-ամյա տղամարդը ծեծի է ենթարկել մորը եւ ձեռքերով պարանոցը սեղմելու եղանակով խեղդամահ արել վերջինիս: 50-ամյա տղամարդը ձերբակալվել է:

Տուժողի որդին հարցաքննվել է եւ տվել ինքնախոստովանական ցուցմունք:

Միջնորդություն է ներկայացվել հսկող դատախազին՝ 50-ամյա տղամարդու նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ, որը բավարարվել է, եւ վերջինիս մեղադրանք է ներկայացվել՝ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով: Միջնորդություն է ներկայացվել դատարան նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ:

Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ՓՈՐՁԵԼ Է ՓԱԽՉԵԼ

Երեւանի Չարենցի փողոցում 28-ամյա եւ 37-ամյա երիտասարդների են ձերբակալել, որոնց մոտ հայտնաբերվել են զենքեր եւ փամփուշտներ:

Ոստիկանությունից հայտնում են, որ ոստիկանները Չարենցի փողոցում գիշերը՝ժամը 02:25-ին, հայտնաբերել, ապօրինի զենք-զինամթերք պահելու եւ կրելու կասկածանքով ձերբակալել եւ Կենտրոնական բաժին են տեղափոխել 28-ամյա եւ 37-ամյա երկու երիտասարդի՝ «Հունդաի» մակնիշի մեքենայով հանդերձ: Մեքենայի խուզարկությամբ հայտնաբերվել են կարճեցված փողով 2 հրազեն եւ «Վինչեստր» տեսակի հրացան, իսկ 37-ամյա վարդենիսցի վարորդի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 16 մմ տրամաչափի 4 փամփուշտ:

Ձերբակալման ժամանակ 37-ամյա վարդենիսցին փորձել է փախչել, սակայն ընկել է, գլուխը խփել մայթեզրին եւ ստացել վնասվածք:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են քննչական բաժին:

ՄԱՀԱՊԱՏԻԺ՝ ԻՐԱՆՈՒՄ

Իրանում երկու մարդ մահապատժի է ենթարկվել համացանցում աթեիզմ քարոզելու, հակաիսլամական քարոզչություն իրականացնելու եւ Ղուրանն այրելու համար. հաղորդում է իրանական Tasniշ գործակալությունը՝ հղում անելով երկրի դատական իշխանության մամուլի կենտրոնին:

Դատավճռի հիման վրա՝ մահապատժի են դատապարտվել Սադրոլլա Ֆազելի-Զարեն՝Մարգարեին վիրավորելու, դավանափոխության, Մարգարեի մոր նկատմամբ աստվածանարգության, Ղուրանը այրելու միջոցով պղծելու, սուրբ հասկացությունները վիրավորելու եւ այլ անձանց մասնավոր լուսանկարներ հրապարակելու մեղադրանքով, եւ Յուսեֆ Մեհրդադը՝ Մարգարեին վիրավորելու համար:

Գործակալության տեղեկատվության համաձայն՝Մեհրդադն ու Ֆազելի-Զարեն, օգտագործելով իրանական հեռախոսային եւ ֆրանսիական վիրտուալ համարները, ստեղծել եւ կառավարել են համապատասխանաբար 15 եւ 20 ինտերնետային համայնքներ եւ ալիքներ, որոնք զբաղվում էին աթեիստական եւ հակաիսլամական քարոզչությամբ եւ վիրավորում էին մահմեդականների համար սրբազան հասկացություններն ու անհատներին: Հետաքննության ընթացքում հայտնաբերվել են նաեւ տեսագրություններ, որոնք վկայում են այն մասին, որ նրանք այրել են Ղուրանը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 5-ից 7-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 142 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՎՏԱՆԳՆ ԱՎԵԼԻ ԻՐԱԿԱՆ Է

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը ապրիլին 19-ին որոշում է ընդունել 2023թ. հունիսի 8-ին իր ղեկավարությամբ անցկացնել հրամանաշտաբային ուսումնավարժություն՝ «Հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը եւ իրականացումը անտառային հրդեհների ժամանակ» թեմայով, ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ նշանակել Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության գնդապետ Վահան Փիրումյանին: Տավուշում անտառային հրդեհների վտանգը մշտապես առկա է. անցյալ տարվա ամռանը Իջեւան քաղաքի ծայրամասում՝ բարձրադիր, բարդ ռելիեֆ ունեցող տեղանքում մեծ հրդեհ եղավ, որը դժվարությամբ հրշեջ ուղղաթիռի միջոցով օրեր անց մարեցին, սակայն սահմանամերձ մարզի բնակչության համար առավել վտանգ են պարունակում ադրբեջանական զինուժի հնարավոր ոտնձգությունները, Տավուշի բնակավայրերի ռմբակոծությունները եւ գնդակոծությունները: Տավուշի մարզպետին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ հարցնելով, թե մարզի սահմանամերձ բնակավայրերում, այդ բնակավայրերի հանրակրթական դպրոցներում ընդհանուր թվով քանի ռմբապաստարան գոյություն ունի: Մարզպետի պատասխանում նշված է, որ այդ տեղեկատվությունը գաղտնի է: Հավելեմ, որ Տավուշի սահմանամերձ բնակավայրերում ռմբապաստարանների առումով վիճակը բարվոք չէ:

ՆՈՐՈԳՈՒՄԸ ՉԵՆ ԱՎԱՐՏԵԼՈՒ

2022 թվականից Դիլիջան քաղաքում սկսվել է Երեւանի Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործությունների կենտրոնի Դիլիջանի մասնաճյուղի՝ Ժողովրդական արվեստի թանգարանի շենքի հիմնանորոգումը: Թանգարանի շենքը վատթար վիճակում էր գտնվում եւ հիմնանորոգման կարիք ուներ: Ճարտարապետական այդ կառույցը զբոսաշրջային Դիլիջանի հարուստ պատմության վառ վկաներից է: ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Հովհաննես (Վանիկ) Շարամբեյանը իր տունը նվիրել է քաղաքին, 1979թ.-ին այն դարձրել է թանգարան: Այդ շենքը նախկինում պատկանել է իշխանուհի Մարիամ Թումանյանին: Ծրագրով նախատեսված է, որ թանգարանի շենքի նորոգումը պետք է ավարտվի 2023 թվականի ընթացքում, սակայն մամուլում, հողում անելով ԿԳՄՍ նախարարությանը, տեղեկություններ կան, որ շենքի նորոգումը կավարտվի 2024 թվականին: Երկու տարում երկհարկանի ոչ մեծ շինության, մի առանձնատան նորոգումը չե՞ն կարողանում ավարտել: Կարծում եմ, որ թանգարանի շենքի նորոգման ժամկետի խախտման վերաբերյալ ԿԳՄՍ նախարարությունը պետք է պարզաբանում տա:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔՆՆԱՇՐՋԱՆ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

ԿԳՄՍ նախարարի հրամանով՝ հաստատվել են 2023 թվականի 2-րդ քննաշրջանի՝ դրսեկության ձեւով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման եւ անցկացման աշխատակարգը եւ ժամանակացույցը:

Ըստ այդմ՝ դրսեկության ձեւով (էքստեռն) ավարտական քննությունները կանցկացվեն 2023 թվականի հունիսի 5-ից մինչեւ հուլիսի 3-ը ներառյալ Երեւանի թիվ 198 ավագ դպրոցում:

Հիմնական կրթության վկայական ստանալու համար դրսեկները 2023 թվականի 2-րդ քննաշրջանի ընթացքում «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Հայաստանի աշխարհագրություն», «Աշխարհագրություն» առարկաների քննությունները կհանձնեն գրավոր, իսկ «Հայոց եկեղեցու պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատի-կա», «ՆԶՊ եւ անվտանգ կենսագործունեություն», «Ռուս գրականություն» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար), «Օտար լեզու» («Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ), «Հայոց պատմություն», «Գրականություն», «Ռուսաց լեզու» առարկաների քննությունները՝ բանավոր:

Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար դրսեկները «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբա-նու-թյուն», «Աշխարհա-գրություն», «Հայոց պատմություն», «Մաթեմատիկա», «Հայոց լեզու եւ հայ գրականություն» առարկաների քննությունները կհանձնեն գրավոր, իսկ «Օտար լեզու» (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ), «Ռուսաց լեզու», «Հայոց եկեղեցու պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատի-կա», «ՆԶՊ եւ անվտանգ կենսագործունեություն», «Ռուս գրականություն» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաները՝ բանավոր:

«Ֆիզկուլտուրա» առարկայից կանցկացվի ստուգարք (նորմատիվների հանձնում):

Գրավոր քննական թեստերը կազմում է Գնահատման եւ թեստավորման կենտրոնը՝ յուրաքանչյուր առարկայից առնվազն 4 թեստ՝ գնահատման 20 բալային համակարգով: Բանավոր քննական հարցատոմսերը կազմում են էքստեռն քննություններ ընդունող դպրոցի համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 10 բալային համակարգով:

Հիմնական կրթության վկայականում եւ միջնակարգ կրթության ատեստատում ավարտական եւ պետական ավարտական քննական առարկաները գնահատվում են 20 բալային համակարգով, իսկ տարեկան գնահատականները նշանակվում են՝ 20 բալային համակարգից գնահատականները վերածելով 10 բալային համակարգի: Բանավոր քննությունները գնահատվում են 10 բալային համակարգով եւ համարվում են տարեկան գնահատականներ:

Գնահատականները գրանցելիս գնահատման 20 բալային համակարգից 10 բալային համակարգին անցման համապատասխանությունը կատարվում է՝ համաձայն հետեւյալ սանդղակի.

20 միավոր - 10
18-19 միավոր - 9
16-17 միավոր - 8
14-15 միավոր - 7
12-13 միավոր - 6
10-11 միավոր - 5
8-9 միավոր - 4

Դրսեկության ձեւով (էքստեռն) քննությունները կանցկացվեն՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

Դրսեկության ձեւով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպելու եւ անցկացնելու գործընթացը համակարգում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը:

ԿԱԼԱՆՔ

ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

ՀՀ ոստիկանության կոմիտեի Արագածոտնի մարզային ոստիկանության վարչությունում ավարտվել է Արագած գյուղի բնակչի կողմից պարեկների ծառայողական գործունեությանը միջամտելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Այս մասին հայտնում են ՔԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից՝ նշելով, որ քննությամբ պարզվել եւ հիմնավորվել է, որ 2023թ. ապրիլի 18-ին՝ ժամը 23:40-ին, ՀՀ ՆԳՆ պարեկային ծառայության Արագածոտնի մարզի գումարտակի պարեկներն «Ապարան 2» երթուղում ծառայություն իրականացնելիս Արագածոտնի մարզի Արագած գյուղի Կենտրոնական խճուղի եւ Կոմիտաս փողոցների խաչմերուկում նկատել են անկանոն ընթացող «Վազ 21154» մակնիշի ավտոմեքենան:

Վարորդից պարզաբանումներ ստանալու համար պարեկները բարձրախոսով հրահանգել են կանգնեցնել ավտոմեքենան եւ օրենքով սահմանված կարգով ներկայացնելով կանգնեցնելու պատճառը՝ պահանջել փաստաթղթերը: Պարզվել է, որ վարորդը, որը հանդիսանում է Արագած գյուղի բնակիչ՝ ծնված 1974թ., գտնվում է ոչ սթափ վիճակում, որի վերաբերյալ նրան պարզաբանվել են կատարած իրավախախտումը եւ հետեւանքները:

Փաստի առթիվ պարեկների կողմից կազմվել է արձանագրություն, որի ընթացքում վերջինս վրդովվել է եւ հեռացել: Պարեկային ծառայության աշխատակիցներն օրինական պահանջ են ներկայացրել վերջինիս, որ ներկա գտնվի արձանագրությունը կազմելուն, որից հետո վարորդը հոյհոյանքներ է հնչեցրել նրանց հասցեին:

Վերջինիս հակաիրավական վարքագիծը կանխելու համար պարեկային ծառայության աշխատակիցները փորձել են նրան բերման ենթարկել, ինչին ի պատասխան՝ քաղաքացին քաշքշել է իրենց օրինական ծառայողական գործունեությունն իրականացնող պարեկներից մեկին, ձեռքով հարվածել նրանցից երկուսին, ձեռքին եղած պայուսակը նետել պարեկներից մեկի դեմքին, որից հետո Արագած գյուղի բնակիչը ձերբակալվել է:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ նրան մեղադրանք է ներկայացվել: Վերջինիս նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որը բավարարվել է մասնակի, եւ նրա նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց է կիրառվել տնային կալանքը: Քրեական վարույթը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է դատախազություն՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 37 ճՏՊ. 57 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Անվճար կրթական ծրագիր՝ պատերազմից տուժած ընտանիքների երեխաների համար Team Telecom Armenia-ն սկսում է երկարաժամկետ համագործակցություն Smart Armenia-ի հետ՝ աջակցելու կազմակերպության բոլոր կրթական նախաձեռնություններին:

Համագործակցության շրջանակում Team-ը Smart Armenia-ին տրամադրել է անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, այդ թվում՝ նորագույն համակարգիչներ, իսկ դասասենյակներն ապահովել է բարձր թողունակությամբ ինտերնետ հասանելիությամբ, ինչը մեծապես կնպաստի կազմակերպվող դասընթացների որակի բարձրացմանը:

Ապրիլին Smart Armenia-ն մեկնարկել է ռոբոտաշինության անվճար դասընթացներ 44-օրյա պատերազմից տուժած ընտանիքների 10-ից 16 տարեկան եւ ինժեներությամբ հետաքրքրված պատանիների համար:

Դասընթացի մասնակիցները ստանում են գիտելիքներ ինժեներական ծրագրավորման, 3D մոդելավորման եւ ռոբոտաշինության բնագավառներում, իսկ արդեն դասընթացի ավարտին ստեղծում սեփական խելացի լուծումը:

Առաջին ու երկրորդ խմբերի դասընթացները սկսվել են, եւ այժմ ընթանում է երրորդ փուլի մասնակիցների հավաքագրումը: Ծրագիրը մեկնարկելու է մայիսի 12-ին եւ տեւելու է 6 ամիս:

Ծրագրին գրանցվելու համար անհրաժեշտ է լրացնել ձեւաթուղթ, իսկ հարցերի դեպքում զանգահարել 033 555996 կամ գրել նամակ info@smartarmenia.org էլ. հասցեին: Վերջնաժամկետը մայիսի 10-ն է: Մասնակիցների ուսուցումը անվճար է դարձել «Հայաստան» համահայկական հիմնադրամի ֆինանսավորման միջոցով:

ՀԻՎԱՆԴԱՑՈՒԹՅԱՆ ԱՃ

Ռուսաստանում առաջնային ճարպակալմամբ հիվանդացությունը 2022 թվականին աճել է 10,7 տոկոսով. հայտնում է «ՌԻԱ Նովոստին»՝ վկայակոչելով ՌԴ առողջապահության նախարարության զեկույցը:

Ռուսաստանի Դաշնությունում առաջնային ճարպակալման դեպքերի առավելագույն աճը պետք է կազմեր 8,7տոկոս, բայց դեպքերի իրական աճը գերազանցել է այն եւ կազմել 10,7 տոկոս: Առողջապահության նախարարությունը նման ավելցուկը համարում է «չափազանց տագնապալի միտում»:

Զեկույցում ընդգծվում է, որ ճարպակալումը սրտանոթային, օնկոլոգիական հիվանդությունների, շաքարային դիաբետի զարգացման եւ պտղաբերության նվազման ռիսկի գործոն է:

ՅՈՒՅԱՆԻՇՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է

ԱՄԵՆԱՇԱՏ ԱՐՏԱՀԱՆՎԱԾ ՄԵՏԱՂՆԵՐ

Հայաստանն այս տարվա առաջին եռամսյակում արտահանել է 1մլրդ 664 մլն 789.9 հազար դոլարի ապրանք, ինչը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ ավելացել է 2.3 անգամ: Արտահանման ծավալներում ամենամեծ մասը բաժին է ընկնում թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարերին, թանկարժեք մետաղներին ու դրանցից պատրաստված իրերին:

ArmLur.am-ն այս մասին տեղեկանում է ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալներից:

Իսկ ինչ վերաբերում է ներմուծմանը, ապա այն կազմել է 2 մլրդ 583 մլն 263.3 հազար դոլար. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճը 89.1 տոկոս է: Ընդհանուր առմամբ Հայաստանի արտաքին եւ փոխադարձ առեւտրաշրջանառությունը տարվա առաջին եռամսյակում կազմել է 4 մլրդ 248 մլն 53.2 հազար դոլար, ինչը 2 անգամ ավել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից:

Ամենաշատ արտահանումն արվել է դեպի Ռուսաստան՝ 838 մլն 777.9 հազար դոլարի. սա 4.5 անգամ ավելի շատ է, քան 2022-ի հունվար-մարտին արտահանվածը: Արտահանման ծավալներով երկրորդ տեղում Արաբական Միացյալ Էմիրություններն է: Այս տարվա առաջին եռամսյակում Հայաստանից ԱՄԷ է արտահանվել 288 մլն 774.9 հազար դոլարի արտադրանք. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճը 13.2 անգամ է: Հաջորդը Նիդերլանդներն է: Հայաստանից Նիդերլանդներ արտահանումը 2023-ի հունվար-մարտին կազմել է 100 մլն 128.9 հազար դոլար. նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ աճը 80.5 տոկոս է:

Ընդհանուր առմամբ, Հայաստանից ԵԱՏՄ երկրներ արտահանման ծավալը կազմել է 878 մլն 138.2 հազար դոլար, իսկ ԵՄ երկրներ՝ 185 մլն 436.7 հազար դոլար:

Ինչ վերաբերում է արտահանված ապրանքներին, ապա առաջին եռամսյակում արտահանման ծավալներում ամենամեծ բաժինն ունեն թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները եւ դրանցից իրերը՝ 382 մլն 445.4 հազար դոլարի. սա 2022-ի հունվար-մարտի նկատմամբ ավելացել է շուրջ 4 անգամ: Այնուհետեւ Հայաստանից ամենաշատն արտահանվել են մեքենաներ, սարքավորումներ եւ մեխանիզմներ՝ 270 մլն 988.6 հազար դոլարի. աճը 16.9 անգամ է: Երրորդ տեղում պատրաստի սննդի արտադրանքն է. Հայաստանից հունվար-մարտին արտահանվել է 208 մլն 456.6 հազար դոլարի պատրաստի սննդի արտադրանք. 2022-ի նույն ժամանակաշրջանի համեմատ աճը 53.3 տոկոս է:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

ՅՈՒՆԻԲԱՆԿ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ

ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Թողարկողի անվանումը՝ «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերություն:

Առաջարկվող արժեթղթերի դասը, ծավալը և այլ հիմնական տվյալները	
Արժեթղթերի դասը	Սովորական բաժնետոմս
Արժեթղթերի ձևը	ոչ փաստաթղթային
Բաժնետոմսերի քանակը	15,000,000 հատ
Մեկ բաժնետոմսի տեղաբաշխման արժեքը	300 ՀՀ դրամ
Բաժնետոմսերի ընդհանուր արժեքը՝ տեղաբաշխման գնով	4,500,000,000 ՀՀ դրամ

Հրապարակային առաջարկի նախատեսվող ժամանակահատվածը

Տեղաբաշխումը սկսելու հստակ օրը կհրապարակվի Բանկի կայքում տեղաբաշխման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

Բաժնետոմսերի հրապարակային առաջարկը մեկնարկել է սույն Ազդագրի՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցմանը հաջորդող 3-րդ աշխատանքային օրը և տևելու է մինչև 22 աշխատանքային օր:

Ազդագիրը հրապարակվել է «Յունիբանկ» ԲԲԸ-ի կայքում 08.05.2021թ.-ին:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով «Յունիբանկ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակում (ք.Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5) և մասնաճյուղերում (հասցեները տես բանկի ինտերնետային կայքում՝ www.unibank.am), իսկ էլեկտրոնային պատճենը՝ «Յունիբանկ» ԲԲԸ-ի ինտերնետային կայքում՝ www.unibank.am:

Ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գրանցվել է 03.05.2021թ.-ին ՀՀ ԿԲ թիվ 1/226Ա որոշման համաձայն :

«Յունիբանկ»-ը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԴԱՍԱԿԱՆ

ՖԼԱՄԵՆԿՈՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ֆլամենկոյի միջազգային Gravity փառատոնին (International Flamenco Festival), որը կանցկացվի մայիսի 8-14-ը Երեւանում, տեղի կունենան համերգներ, կցուցադրվի ներկայացում, ինչպես նաեւ արտերկրից Հայաստան ժամանած արտիստները կանցկացնեն վարպետության դասեր:

Փառատոնը «Զգողականություն» համերգով կմեկնարկի մայիսի 8-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում: Երեկոյին ելույթ կունենան պարողներ Ֆաննի Արան (ԱՄՆ-Ֆրանսիա, Իսպանիա), Քրիստիան Պերեսը (Իսպանիա), Օլգա Պշենիցինան (Ռուսաստան), Օքսանա Սերիկը (Ռուսաստան), Ջուլիա Պլամսը (Ռուսաստան), կիթառահար Խոսե Ռոմերո Դիասը (Իսպանիա), վոկալ ֆլամենկո Մելքիոր Կամպոսը (Ֆրանսիա), «Զարթոնք» պարային համույթը, Մանուչարյան տրիոն, Արսեն Պետրոսյան քառյակը: Մայիսի 9-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնի բեմում կներկայացվի «Հոգի» ֆլամենկո ներկայացումը: «Հոգին բոլոր կենդանի էակների էությունն է: Հոգու լեզուն համընդհանուր է եւ հասկանալի բոլորին եւ ամենուր: Պետք չէ իսպաներեն իմանալ, որպեսզի կարեկցես այն էմոցիաներին, որոնք ֆլամենկոյի երգիչն է ներդնում իր պատմություններում: Պարտադիր չէ լինել դասական երաժշտության գիտակ Վիվալդիի փայլուն ստեղծագործությունների միջով թռչելու զգացումն ապրելու համար: Դուք կարող եք գտնել ձեր հոգու համար թանկ մի բան այնտեղ, որտեղ երբեք չէիք ակնկալում»,-նշված է ներկայացման նկարագրում: Ներկայացման շրջանակում թատրոնի բեմում Ռուսաստանի, Հայաստանի եւ Իսպանիայի արտիստները կստեղծեն մեկ կտավ, որը բաղկացած է տարբեր դարաշրջանների եւ ոճերի երաժշտությունից, ֆլամենկո պարերից եւ տեսահոլովակներից:

Մասնակիցներն են՝ Հայաստանի Կամերատա նվագախմբի կոնցերտմայստեր՝ Աստղիկ Վարդանյան, վոկալ ֆլամենկո՝ Մելքիոր Կամպոսի (Ֆրանսիա), Ֆլամենկո պարային թատրոնի (գեղարվեստական ղեկավար՝ Եկատերինա Ցվետկովա), խորեոգրաֆիա՝ Եկատերինա Ցվետկովա, Խավիեր Լատորե, երաժշտությունը՝ Անտոնիո Վիվալդի, Աստոր Պիացոլլա, իսպանական ժողովրդական երաժշտություն: «Միջազգային համագործակցության եւ փոխադարձ համակրանքի վրա հիմնված ամուր կապերի ստեղծումը, որը ծնվում է տարբեր երկրների մասնակիցների միջեւ, փառատոնի հիմնական նպատակներից է:

Ֆլամենկոյի արվեստը վաղուց դարձել է միջազգային: Gravity փառատոնին հրավիրելով տարբեր երկրների արտիստների՝ մենք ցանկանում ենք աջակցել միասնության եւ համերաշխության նախաձեռնությանը: Եվ որպես մեկնարկային հարթակ ընտրելով հյուրընկալ Հայաստանի մայրաքաղաք Երեւանը՝ եւս մեկ անգամ ցանկանում ենք ցույց տալ, թե որքան անսահման է այս արվեստը»,- նշում են միջոցառման կազմակերպիչները:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Կոմպոզիտոր Ժիրայր Շահրիմանյանն իր ստեղծագործական առաջին քայլերն արել է 12-13 տարեկանում, սակայն պրոֆեսիոնալ գործունեության մեկնարկ է համարում 2003 թվականը, երբ գրել է «Սոնաս դաշնամուրի համար» գործը:

2023-ին Շահրիմանյանի համար կրկնակի հոբելյանական է՝երեսունհինգամյակ եւ ստեղծագործական գործունեության քսանամյակ: Կոմպոզիտորը հոբելյանները նշելու է հեղինակային համերգով, որը տեղի կունենա մայիսի 17-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

Համերգին հանդես կգան նշանավոր ջութակահար, Գինեսի ռեկորդակիր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստ Նիկոլայ Մադոյանը, թավջութակահար Դավիթ Մելքոնյանը, որը միջազգային մրցույթների դափնեկիր է, դաշնամուրի մոտ է լինելու հեղինակը՝միջազգային մրցույթների դափնեկիր, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ Ժիրայր Շահրիմանյանը:

ԼՈՒՐԵՐ

ԴՈՒՐՍ ՄՆԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայաստանի բռնցքամարտի հավաքականի անդամ, Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր Նարեկ Մանասյանը դուրս եկավ աշխարհի առաջնության քառորդ եզրափակիչ:

Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդում ընթացող աշխարհի առաջնության 92 կգ քաշային կարգում Հայաստանի հավաքականի անդամ Նարեկ Մանասյանը երկրորդ մենամարտն անցկացրեց: Հայ բռնցքամարտիկն ուժերը չափեց Իրանի ներկայացուցիչ Պուրիա Ամիրիի հետ: Նա հաղթեց 5:0 հաշվով:

Մանասյանը դուրս եկավ աշխարհի առաջնության քառորդ եզրափակիչ:

Երեկ իր մեկնարկային մենամարտում Ռուսլան Ասլիկյանը մրցել էր Վենեսուելան ներկայացնող Սեգունդո Ռիվասի հետ: Հայ բռնցքամարտիկը զիջել էր 0:5 հաշվով:

ՉԼ–Ի ՀԱՂԹՈՂ

Հայաստանի ֆուտզալի ազգային հավաքականի դարպասապահ Լուան Մյուլլերը դարձել է Չեմպիոնների լիգայի հաղթող:

Այս մասին հայտնում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան: Եզրափակչում Լուանի ակումբը՝ «Պալմա Ֆուտզալը», մրցում էր Լիսաբոնի «Սպորտինգ»-ի հետ: Հանդիպման հիմնական ժամանակն ավարտվել է 1-1 հաշվով:

Հետխաղյա 6-մետրանոց հարվածաշարում իսպանական ակումբը հաղթել է 5:3 հաշվով՝ շնորհիվ հենց Լուանի կողմից հետ մղված հարվածի:

ՀԵՌԱՑՐԵԼ ԵՆ ՄԱՐԶՉԻՆ

Վրացական «Թելավին» գլխավոր մարզիչի պաշտոնից հեռացրել է Հայաստանի հավաքականի նախկին գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանին. հաղորդում է ակումբի մամուլի ծառայությունը:

Վարդան Մինասյանը «Թելավին» գլխավորել էր այս տարվա մարտին: Նրա ղեկավարությամբ թիմը Վրաստանի առաջնությունում անցկացրել է 7 հանդիպում, կրել 5 պարտություն, 2 խաղ ավարտվել է ոչ-ոքի:

«Թելավին» 12 տուրից հետո 7 միավորով 8-րդն է 10 թիմերի պայքարում:

ՆՎԱՃԵԼ Է ԵՐԵՔ ՄԵԴԱԼ

Հայաստանի ներկայացուցիչ Աննա Բաղալյանը մասնակցել է Ֆրանսիայի Նիցա քաղաքում անցկացված Very Nice մրցաշարին:

Նա նվաճել է երեք մեդալ. հաղորդում է ՄՀՖ-ի մամուլի ծառայությունը:

Աննա Բաղալյանը ոսկե մեդալներ է նվաճել բազմամարտում եւ գնդակով վարժությունում, արծաթե մեդալ՝ ժապավենով վարժությունում:

● Մայիսի 10-ին «Հայ-Արտ» մշակութային կենտրոնում տեղի կունենա «Վան Գոգ եւ Բենքսի» ցուցահանդեսը: Տոմսերի արժեքը՝3000-3500 դրամ: Սկիզբը՝ամեն օր՝ժամը 10:00-ից 21:00-ն:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՄԱՔՍԱՅԻՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ եթե անձը հեծանվով հատում է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը, ապա արդյոք հեծանիվը դիտվո՞ւմ է տրանսպորտային միջոց:

Գնել Հարությունյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքներ են համարվում ՀՀ սահմանով տեղափոխվող բոլոր տեսակի առարկաներն ու իրերը, այլ գույքը, այդ թվում՝ արժույթը, արժութային արժեքները, էլեկտրական, ջերմային եւ այլ տեսակի էներգիան, փոխադրամիջոցները՝ բացառությամբ նույն հոդվածով սահմանված տրանսպորտային միջոցների, իսկ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ տրանսպորտային միջոցներ են համարվում բոլոր տեսակի փոխադրամիջոցները, որոնք օգտագործվում են Հայաստանի Հանրապետության սահմանով ուղեւորների եւ ապրանքների միջազգային տեղափոխման նպատակով, այդ թվում՝ բեռնարկղերը (կոնտեյներները) եւ այլ օժանդակ փոխադրամիջոցները:

ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող հեծանիվը չի հանդիսանում ՀՀ մաքսային սահմանով ուղեւորների եւ ապրանքների միջազգային տեղափոխման նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոց, այլ հանդիսանում է անձի հետ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող անձնական գույք՝ համապատասխանելով «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված «ապրանք» հասկացությանը:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ սահմանված դեպքերում մաքսատուրքը եւ հարկերը վճարվում են մինչեւ մաքսային հայտարարագիր ներկայացնելը կամ դա ներկայացնելուն զուգահեռ:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Եթե ԱՊՊԱ հատուցման գործընթացում ապահովագրական ընկերության կողմից հատուցման ժամկետի խախտում է եղել, ապա ի՞նչ պատասխանատվության միջոցներ են սահմանված:

Ռիմա Մնացականյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ ապահովագրական հատուցման գործընթացի կարգավորման՝ ներառյալ փորձաքննությունների, նախնական զննության գործընթացի իրականացման, ապահովագրական հատուցման վճարման եւ ծանուցումների իրականացման համար «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ -ի RL 1-001 կանոններով (ԱՊՊԱ Ընդհանուր պայմաններ) նախատեսված ժամկետների խախտման դեպքում ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ դիմում ներկայացրած անձն իրավունք ունի դիմում ստացած ապահովագրական ընկերությունից պահանջել յուրաքանչյուր կետանցված օրվա համար վճարել տույժ՝ օրենքով սահմանված չափով, իսկ օրենքով համապատասխան խախտման համար տույժ սահմանված չլինելու դեպքում՝ տուժողի կրած տվյալ տեսակի վնասի համար նախատեսված ապահովագրական գումարի 0,1 տոկոսի չափով, որը չի կարող պակաս լինել հիսուն հազար ՀՀ դրամից, եթե միեւնույն հատուցման գործընթացում սույն կանոններով նախատեսված բոլոր գործողությունների համար սահմանված ժամկետների կետանցված օրերի քանակը 7 եւ ավելի է:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ի դեպ, միեւնույն համադրելի ժամանակահատվածում սույն կանոններով նախատեսված տարբեր գործընթացներ կետանցվելու դեպքում այդ ժամանակահատվածի համար տույժերը հաշվարկվում են մեկ անգամ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Գյումրիում

Գյումրու Արամ Սարգսյանի անվան խաղերի մանկապատանեկան մարզադպրոցում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության նախաձեռնությամբ անցկացվել են հանրակրթական դպրոցների 1-3-րդ դասարանների միջեւ «Սպորտլանդիա» մարզական միջոցառման հանրապետական եզրափակիչ փուլի մրցումները:Համառ եւ անզիջում մրցապայքարում հաղթողի տիտղոսը նվաճել է Գյումրու թիվ 30 հիմնական դպրոցի թիմը, որը լավագույն արդյունքն է ցույց տվել եզրափակիչ փուլի ծրագրով անցկացված 5 վարժությունում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 + 2 +14 + 18
Կոտայքի լեռներ	- 2 + 2 +13 + 16
Կոտայքի նախալեռներ	+ 5 + 7 +18 + 20
Գեղարքունիք	0 + 4 +13 + 18
Լոռի	+ 2 + 6 +12 + 18
Տավուշ	+ 3 + 8 +20 + 24
Արագածոտնի լեռներ	- 1 + 3 +13 + 16
Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 8 +18 + 23

Արարատ	+ 7 + 10 +24 + 26
Արմավիր	+ 6 + 8 +24 + 26
Վայոց ձորի լեռներ	- 1 + 2 +14 + 16
Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 5 +19 + 23
Սյունիքի հովիտներ	+ 8 + 11 +23 + 28
Սյունիքի նախալեռներ	+ 3 + 6 +17 + 20
Արցախ	+ 7 + 11 +20 + 25
Երեւան	+ 7 + 9 +21 + 23

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **8.5.2023**
Հասցեն՝ Գերաքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*